ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«12» ապրիլի 2019 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Ասատրյանը:

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ Գյումրի համայնքի ավագանու թվով 24 (քսանչորս) անդամներ՝
Ս.Բալասանյանը, Լ.Խաչատրյանը, Տ.Հովհաննիսյանը, Մ.Սահակյանը, Լ.Սանոյանը, Վ.Եդիգարյանը, Վ.Հունանյան Գ.Սարգսյանը, Կ.Միքայելյանը, Տ.Փանոսյանը, Գ.Գրիգորյանը, Կ.Թաթարյանը, Ս.Աստոյանը, Ա.Խաչատրյանը. Ա.Աղանյան, Ռ.Սարգսյանը, Ա.Մխիթարյանը, Ս.Մարտիրոսյան, Հ.Եղիազարյանը, Լ.Բարսեղյանը, Գ.Մաթևոսյանը, Ա.Գրիգորյանը, Ա.Ղարաղազարյանը, Հ.Պողոսյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռ.Ասատրյանը:

Նիստին հրավիրված են և մասնակցում են՝ համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը, ինչպես նաև ՀԼՄ-ների և ՀԿ-ների ներկայացուցիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Ավագանու անդամ Արման Գրիգորյանը նիստին ներկայացավ ուշացած և մասնակցեց նախագծերի քննարկմանը 7-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 12-ի հերթական վեցերորդ նստաշրջանի երրորդ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. ՄԱՅԻՍՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Ավագանու անդամ Արման Գրիգորյանը նիստին ներկայացավ ուշացած և մասնակցեց նախագծերի քննարկմանը 7-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հատկացնել դրամական օգնություն սոցիալապես անապահով պայմաններում ապրող ներքոգրյալ ընտանիքներին և անձանց.

1) Արցախյան պատերազմում (1991-1994թվականներին) զոհված՝ թվով 104 (մեկ հարյուր չորս) ազատամարտիկների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2. 080. 000 (երկու միլիոն ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N1 հավելվածի,

2) զոհված (մահացած) թվով 174 (մեկ հարյուր յոթանասունչորս) զինծառայողների ընտանիքներից յուրաքանչյուրին՝ 20.000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 3. 480. 000 (երեք միլիոն չորս հարյուր ութսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Արցախյան պատերազմի 1-ին կարգի հաշմանդամ թվով 16 (տասնվեց) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 240.000 (երկու հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ ՝ համաձայն N3 հավելվածի,

4) 2-րդ, 3-րդ կարգի հաշմանդամ՝ թվով 233 (երկու հարյուր երեսուներեք) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 10.000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 2.330.000 (երկու միլիոն երեք հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 4 հավելվածի,

5) Գյումրի քաղաքի Հայրենական Մեծ պատերազմի մասնակից՝ թվով 61 (վաթսունմեկ) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 915.000 (ինը հարյուր տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N5 հավելվածի,

6) 1956 թվականի հոկտեմբերին Հունգարիայի հեղաշրջման ճնշմանը մասնակից՝ թվով 33 (երեսուներեք) վետերաններից յուրաքանչյուրին՝ 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 495. 000 (չորս հարյուր իննսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N6 հավելվածի:

7) Երկրապահ կամավորների միության անդամներ սոցիալապես անապահով՝ թվով 15 (տասնհինգ) ազատամարտիկներից յուրաքանչյուրին՝ 15.000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, ընդամենը՝ 225. 000 (երկու հարյուր քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն N 7 հավելվածի,

8) Գյումրու վետերանների միության խորհրդին՝ 70.000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ մայիսի 09-ի՝ Հաղթանակի 74-ամյա տարելիցի կապակցությամբ տոնական միջոցառման կազմակերպման և անցկացման համար:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 10/4/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. ԿԱՐԵՆ ԱՐՏԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԵՎ ՀԱՄԼԵՏ ՀՐԱՉԻ ԱՎԱԳՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Ավագանու անդամ Արման Գրիգորյանը նիստին ներկայացավ ուշացած և մասնակցեց նախագծերի քննարկմանը 7-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Կարեն Արտակի Կարապետյանի և Համլետ Հրաչի Ավագյանի ընտանիքներին հատկացնել յուրաքանչյուրին՝ 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. 2.Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 10/7/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <<ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵԶԵՐՎՆԵՐ>> ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ՋԻԼԱՎՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0

Ավագանու անդամ Արման Գրիգորյանը նիստին ներկայացավ ուշացած և մասնակցեց նախագծերի քննարկմանը 7-րդ հարցից:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության <<Աշխատանքային ռեզերվներ>> մարզական հասարակական կազմակերպության Գյումրու մասնաճյուղին հատկացնել 500 000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ մարզադպրոցի վերանորոգման նպատակով:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 8/4/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 13 (ՏԱՍՆԵՐԵՔ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ԼՐԻՎ ՄԱՇՎԱԾ (ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ) ԳՈՒՅՔԻ ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
Ավագանու անդամ Արման Գրիգորյանը նիստին ներկայացավ ուշացած և մասնակցեց նախագծերի քննարկմանը 7-րդ հարցից:
ՈՐՈՇԵՑԻՆ.
Թույլատրել կազմակերպություններին գույքի դուրսգրումը:
2.Գույքի դուրսգրման գործընթացի կազմակերպումը և դրա հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպումը վերապահել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարի ընդունած իրավական ակտով ստեղծվելիք հանձնաժողովին:
3.Դուրսգրված գույքի կամ նրա առանձին հանգույցների, նյութերի, դետալների և մասերի օրենքով սահմանված կարգով հնարավոր վաճառքից ստացված միջոցների բաշխումը (ծախսման ուղղությունները) վերապահել համայնքի ղեկավարին:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 13-Ի N 5 ՈՐՈՇՈՒՄՆ (ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5) ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 23
դեմ – 0
ձեռնպահ – 0
Ավագանու անդամ Արման Գրիգորյանը նիստին ներկայացավ ուշացած և մասնակցեց նախագծերի քննարկմանը 7-րդ հարցից:
ՈՐՈՇԵՑԻՆ.
1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2005 թվականի ապրիլի 13-ի ««Գյումրի-վերածնունդ» ԲՀԿ-ին՝ 1988թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող «Հուշահամալիր-կոթողի» կառուցման նպատակով՝ Շառլ Ազնավուրի հրապարակի և Խանջյան փողոցի հարևանությամբ գտնվող զբոսայգու 7 հա հողատարածքը անհատույց (մշտական) օգտագործման տրամադրելու մասին» N 5 որոշումը (արձանագրություն N 5):
2. Լուծել 2005 թվականի ապրիլի 29-ի հողամասի անհատույց (մշտական) օգտագործման պայմանագիրը (սեղանամատյանում գրանցված՝ N 2872 թվագրությամբ):
3. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանմանը՝ օրենքով սահմանված կարգով չեղարկել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 0106124 վկայականը:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 15-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 1-ին տողի 6-րդ սյունակի «810 000» թիվը փոխարինել «610 000» թվով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 126-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերն աճուրդով օտարելու և աճուրդի մեկնարկային գներ ու պայմաններ հաստատելու մասին» N 126-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) 4-րդ տողի 6-րդ սյունակի «350 000» թիվը փոխարինել «200 000» թվով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Գյումրի համայնքի սեփականությունը հանդիսացող, կառուցապատման նպատակով առանձնացված հողամասերն օտարել աճուրդով և հաստատել աճուրդի մեկնարկային գներն ու պայմանները՝ համաձայն հավելվածի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ 1-ԻՆ ԹԱՂԱՄԱՍ N 87/5 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

կողմ – 24

դեմ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող Վ.Սարգսյան 1-ին թաղամաս N 87/5 հասցեի (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 22032019-08-0036) բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ 0,28328 (զրո ամբողջ քսանութ հազար երեք հարյուր քսանութ հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը մրցույթով վարձակալության իրավունքով տրամադրել օգտագործման՝ բարեկարգման և կանաչապատման նպատակով:
2. Հողամասը վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթի մեկնարկային վարձավճարի չափ սահմանել՝ տարեկան 70000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Հողամասի վարձակալության ժամկետ սահմանել 5 (հինգ) տարի:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

11. ՔԱՂԱՔԱՑԻ ԱԶԱՏ ԳԱԳԻԿԻ ԵՐԱՆՈՍՅԱՆԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Քաղաքացի Ազատ Գագիկի Երանոսյանին օգտագործման տրամադրված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 5-րդ անցում N 9/6 հասցեի 3,0726 (երեք ամբողջ յոթ հարյուր քսանվեց տասհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը փոփոխել կառուցապատման իրավունքով՝ նույն ժամկետներով և պայմաններով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

12. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Գ.ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ N 1/1 ՀԱՍՑԵԻ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 11032019-08-0018) Գ.Նժդեհի փողոց N 1/1 հասցեի զբոսայգու 7,264217 (յոթ ամբողջ երկու հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր տասնյոթ միլիոներորդական) հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակությամբ

ժամկետով տրամադրել օգտագործման՝ ժամանցի և հանգստի գոտի կազմակերպելու նպատակով:

2. Սույն որոշման 1-ին՝ կետում նշված հողամասի մրցույթի վարձավճարի մեկնարկային չափ սահմանել՝ տարեկան 1 453 000 (մեկ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐԸ ՆՇԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ԹՈՎՄԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ապրիլ ամսի վերջին շաբաթ օրը սահմանվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու օր: Այդ կապակցությամբ նախատեսված միջոցառումները պատշաճ կերպով կազմակերպելու և անցկացնելու համար հատկացնել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) <<Այլ ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

14. ՋԱԶԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՆՇԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Լ.ԹՈՎՄԱՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ապրիլի 30-ից մայիսի 3-ը Ջազի միջազգային օրվա առիթով կազմակերպված <<Հայաթ ջազ>> նախագիծը պատշաճ կերպով կազմակերպելու և անցկացնելու համար հատկացնել 1 000 000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 8/6/1 գործառական դասակարգման (4861) <<Այլ ծախսեր>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց.

ԼՍԵՑԻՆ.

15. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՊԱԼԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ՊԱՐԱՍՐԱՀՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼ ՊԱՀԵՍՏԻ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 03Ա201136) Մատնիշյան 182 հասցեի «Մանկապատանեկան արվեստի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության՝ 100.17 (մեկ հարյուր ամբողջ տասնյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարասրահը 1 (մեկ) տարի ժամկետով, ուսուցման նպատակով տրամադրել Վիկտորիա Մատինյանին, ամսական վարձավճարի չափը սահմանել 53 500 (հիսուներեք հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ 68.06 (վաթսունութ ամբողջ վեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով պարասրահը տրամադրել Գևորգ Գասպարյանին ուսուցման նպատակով 1 (մեկ) տարի ժամկետով, ամսական վարձավճարի չափը սահմանել 37 900 (երեսունյոթ հազար ինը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշումն ուժի.մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

16. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 3 (ԵՐԵՔ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0
ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի թվով 3 (երեք) մարզադպրոցներին, որպես նվիրատվություն, հատկացնել 1.617.350 (մեկ միլիոն վեց հարյուր տասնյոթ հազար երեք հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝

1) Գյումրի համայնքի «Բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն) 581.600 (հինգ հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպության ֆիզիկական պատրաստության մարզադահլիճի, սաունայի և բաղնիքի վերանորոգման նպատակով,

2) Գյումրի համայնքի «Ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն) 235.750 (երկու հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպության սանհանգույցի վերանորոգման նպատակով,

3) Գյումրի համայնքի «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 800.000 (ութ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ մարզադպրոցի մասնաշենքի գազաֆիկացման նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից, ըստ եռամսյակային համամասնությունների՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

17. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 2 (ԵՐԿՈՒ) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ.ՂԱԶԱՐՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Գյումրի համայնքի թվով 2 (երկու) մարզադպրոցներին, որպես նվիրատվություն, հատկացնել 960.000 (ինը հարյուր վաթսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից՝

1) Գյումրի համայնքի «Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն) 840.000 (ութ հարյուր քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպության կարիքների համար տարածք վարձակալելու նպատակով,

2) Գյումրի համայնքի «Ալեքսան Հակոբյանի անվան թենիսի և սեղանի թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն) 120.000 (մեկ հարյուր քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպության կարիքների համար տարածք վարձակալելու նպատակով:

2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագի-տական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 44-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 16-ի «Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի տարածքների վարձակալության տրամադրման վճար սահմանելու մասին» N 44-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը.

1) «դրամ» բառից հետո լրացնել՝ «, իսկ կառուցապատման և սպասարկման համար զբաղեցրած հողամասի մեկ քառակուսի մետր մակերեսի համար սահմանել ամսական 5 (հինգ) Հայաստանի Հանրապետության դրամ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼՍԵՑԻՆ.

19. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2000-2004 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ, ԼԻՆՍԻ, «ՋՈՆ ԵՎ ԿԱՐԵՆ ՀԱՆԹՍՄԱՆ», «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԵՎ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող 2000-2004 թվականներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, Լինսի, «Ջոն և Կարեն Հանթսման», «Հայաստան» համահայկական հիմնադրամների և Ամերիկյան կարմիր խաչի միջոցներով կառուցված բազմաբնակարան շենքերի բաշխված, սակայն դեռևս չսեփականաշնորհված բնակարանները, ինչպես նաև այդ բազմաբնակարան շենքերի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի ու ընդհանուր օգտագործման տարածքների նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքը, նվիրատվության եղանակով տրամադրել բնակիչներին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակիչների հետ կնքել նվիրատվության պայմանագրեր՝ օրենքով սահմանված կարգով:
3. Պայմանագրերի նոտարական վավերացման և պայմանագրերից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել բնակիչների միջոցների հաշվին:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24
դեմ – 0
ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2019 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

21. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ)

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 24

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու վեցերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2019 թվականի մայիսի 13-ը ժամը 12^{00}-ն:

Որոշումն ընդունվեց

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու անդամներ

Ս. Բալասանյան _____

Լ. Խաչատրյան _____

Տ. Հովհաննիսյան _____

Մ. Սահակյան _____

Լ. Սանոյան _____

Վ. Եդիգարյան _____

Վ. Հունանյան _____

Գ. Սարգսյան _____

Կ. Միքայելյան _____

Տ. Փանոսյան _____

Գ. Գրիգորյան _____

Կ. Թաթարյան _____

Ս. Աստոյան _____

Ա. Խաչատրյան _____

Ա. Աղանյան _____

Ռ. Սարգսյան _____

Ա. Մխիթարյան _____

Ս. Մարտիրոսյան _____

Հ. Եղիազարյան _____

Լ. Բարսեղյան _____

Ա. Գրիգորյան _____

Գ. Մաթևոսյան _____

Ա. Ղարաղազարյան _____

Հ. Պողոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՄԱԳԵԼ ՊԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» ապրիլի 2019թ.